



**ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՍՓՅՈՒՌՔԻ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆԸ**

ԵՎ

**ԲԵՅՐՈՒԹԻ ՀԱՅԿԱԶՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՍՓՅՈՒՌՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ**
հրավիրում են մասնակցելու միջազգային գիտաժողովի.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

11-12 նոյեմբերի, 2019թ.

Երևան, Հայաստան

Գիտաժողովի ընդհանուր ակնարկ

Ներկայումս հայկական սփյուռքում ընթանում են արմատական փոփոխություններ, որոնք կրում են խորքային բնույթ, քանզի հայ ազգի գոյակցության պայմանները տարբեր միջավայրերում բավականին բազմազան են և առաջացնում են բազմաթիվ մարտահրավերներ՝ էթնոմշակութային ու սոցիալական բնույթի և ինքնության պահպանման ճանապարհին:

Արդի մարտահրավերների համատեքստում հայ սփյուռքի հիմնախնդիրների քննարկմանը նվիրված սփյուռքագիտության երկու կենտրոնների գիտնականների գիտաժողովը կոչված է քննարկել հայկական սփյուռքի ուսումնասիրության գերակա խնդիրները, ինչպես նաև հետազոտական հնարքների և գործիքակազմի ներգրավման հարցը հետագա գիտական փնտրտումի ուղղությամբ: Նախատեսված քննարկումներում հատուկ ուշադրության է դարձվելու գիտական մշակումների արդյունքում ստացված նյութերի կիրարման խնդրին, ազգային ծրագրերի և նախագծերի պատրաստմանը:

Մասնակցության համար թեմաների շրջանակներ

- Միյուրքի ուսումնասիրության գերակա խնդիրները
 - Հայկական սիյուրքի ներկա իրավիճակը՝ դիտարկումների փորձ;
 - Միյուրքի ընդհանուր և առանձնակի խնդիրների բացահայտման անհրաժեշտ մոտեցումները;
 - Միյուրքի խնդիրների տիպաբանման և գերակայության հարցերը
- Միյուրքի ուսումնասիրության միջգիտակարգային մոտեցումներ. հետազոտության տիրույթներ և խնդիրներ
 - Միյուրքի ուսումնասիրության տեսական և էմպիրիկ մակարդակները՝ մոտեցումների առանձնահատկությունները ու ընդհանրությունները
 - Միջգիտակարգային հետազոտության տիրույթները և նպատակները
- Միյուրքի ուսումնասիրության մեթոդաբանություն. մեթոդների կիրառության ու գործիքակազմի ընտրության հարցերը
- Գիտական ներուժի կիռարումը ազգային ծրագրերի և նախագծերի մշակման ուղղությամբ
 - Ազգային ծրագրերի բնույթն ու ուղվածությունը
 - Համակարգված գիտելիքները ծրագրային դրույթներում
 - Ծրագրերի մշակման և իրականացման ուղիները՝ խնդիրները, փորձը և հեռանկարները

Ամփոփագրերի ներկայացման պահանջներ

1. Թեման՝ ներկայացված թեմաներից մեկի շրջանակներում.
2. Լեզուն՝ հայերեն (արևմտահայերեն կամ արևելահայերեն), ռուսերեն և անգլերեն լեզուներից որևէ մեկով.
3. Ծավալը՝ մինչև 250 բառ.
4. Կառուցվածքը՝ հակիրճ ներածություն, հիմնահարց, նպատակ, հետազոտական խնդիրներ և մեթոդաբանություն, տեսական շրջանակներ/գիտակարգեր.

Ամփոփագիրը և հակիրճ (1 էջ) ինքնակենսագրականը (CV) անհրաժեշտ է ներկայացնել մինչև և **սեպտեմբերի 10-ը, 2019թ.**, info.diasporastudies@gmail.com էլ.փոստի միջոցով:

Մասնակցություն

Գիտաժողովին կարող են մասնակցել հասարակական գիտությունների հետազոտողներ, գիտաշխատողներ, ասպիրանտներ, ՀԿ-ների և պետական հաստատությունների ներկայացուցիչներ Հայաստանից, Արցախից և արտերկրից:

Մասնակիցները կընտրվեն ներկայացված ամփոփագրերի (abstract) և ինքնակենսագրականների (CV) հիման վրա: Ընտրված մասնակիցները կհրավիրվեն ներկայացնելու զեկուցումներ (15 րոպե տևողությամբ): Ձեկուցումների ընտրված հոդվածները կհրատարակվեն գիտաժողովից հետո:

Ժամանակացույց

Ամփոփագրերի ներկայացման վերջնաժամկետ. **10 սեպտեմբերի, 2019թ.**

Պատասխան. **20 սեպտեմբերի, 2019թ.**

Գիտաժողովի ծրագիր և օրակարգ. **1 հոկտեմբերի, 2019թ.**

Գիտաժողովի լեզուն

Գիտաժողովի լեզուն հայերենն է:

Մասնակցության ֆինանսական ծախսեր

Գիտաժողովին մասնակցությունն անվճար է: Մասնակիցների սննդի ծախսերը հոգում են գիտաժողովի կազմակերպիչները: Կեցության և ճանապարհածախսը հոգում է մասնակիցը:

Կազմակերպական խորհուրդ և խմբագրակազմ

Գիտաժողովի կազմակերպական խորհուրդը ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի գիտաշխատողների խումբն է: Գիտաժողովի հոդվածների ժողովածուի խմբագրակազմը Սփյուռքի հետազոտությունների բաժնի և Բեյրութի Հայկազյան համալսարանի Սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի գիտաշխատողների խումբն է: